

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ք. Երևան

10 հունվարի, 2023թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) ՀՀ արդարադատության նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 781-Ա հրամանի համաձայն՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) միաձայն



**ՈՐՈՇԵՑ՝**

1. Հիմք ընդունելով Որոշման Հավելված 3-ի 15-րդ կետը՝ «Հակակոռուպցիոն ժողովրդական վերահսկողության միություն», «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա», «Թուխմանուկ» հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերին ընթացք չտալ՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած կազմակերպությունների կողմից սահմանված ժամկետում թերությունները չչտկելը:

2. «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» և «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունների

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում Որոշման հավելված 2-ի 7-րդ և 7.1-րդ կետերով սահմանված պահանջներին:

3. Հաստատել «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Իրազեկ քաղաքացիների միավորում», «Իրավաբանների հայկական ասոցիացիա», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Որոշման հավելված 2-ի 7-րդ և 7.1-րդ կետերով սահմանված պահանջներին:

4. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ներկայացնել հրապարակման Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պաշտոնական [www.gov.am](http://www.gov.am) կայքում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական [www.moj.am](http://www.moj.am) կայքում և [anti-corruption.gov.am](http://anti-corruption.gov.am) հարթակում:

Հանձնաժողովի նախագահ՝



ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝



ՔՐԻՍՏԻՆԵ ԳԱՐՈՒՋՅԱՆ



ԱՆԱՀԻՏ ԱՐԱՀԱՄՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝



ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ